

Խաղաղականը. Ժամեր՝ որոնց իսկական
 ծագումը տեսանք վերեւ: Ստույգ է ան-
 չուշտ իննի սովորութիւնը իր մենաստա-
 նին մէջ՝ ուր կը դրէր: Բայց անտեղի ա-
 նոր ընդհանրացումը, զոր ինքն իսկ կը
 հերքէ յետոյ միեւնոյն աշխատութեան
 մէջ, ըսելով՝ թէ « Պարտ է օր ըստ օրէ
 մեզ փրկելոցս եօթն անգամ օրհնել գժըր-
 վիչին ի խորհրդաւոր ժամու. մին ի մէջ դի-
 շերի... ընդ առաւօտն... յերրորդ ժամու
 ... ի վեցերորդ ժամուն... յինն ժամուն
 ... ի լրումն աւուր (Երեկոյեանը) ... ի
 սկիզբն գիշերոյն» կամ Խաղաղականը
 (428), որոնցմէ դուրս կը մնան Արեւա-
 դարն ու Հանգստեանը. առաջինը լքուած
 այդ շրջանին, երկրորդը դուրս մնացած կա-
 նոնական պաշտամունքի ընկալեալ ժամե-
 րէն:

րել պարտ է»(3): Հեղինակներին քիչեր ինքզինքնին արդարացուցած են այլա-
փառներու գրողներին ալ քաղած ըլ-
լալնուն համար:

Առ հասարակ կրնանք ըսել թէ անոնք
հոգն ունեցած են տեղ տալ նախ մեծ մեկ-
նիչներու, ուսկից ալ գալու ըլլային, եւ
յետոյ՝ ամէնուն: Հոգ չէ թէ Աթանասի
քով Եւսեբիոս գրուէր, Դիդիմոս՝ Թէոդո-
րիոսի հետ, Իսիդորոս եւ Թէոդոր, Բար-

(3) Շրթայ մեկնութիւն Ղեւոնդանի, յառաջաբան.

(4) Հմմտ. Dict. de la Bible - Supplément -
Louis Pirot. հտ. Ա. Սիւն 1084-1094. Դար-
ձեալ Enciclopedia Cattolica, Catena բառը.

սեղ՝ Որոգինէսի, եւ Դիոդոր՝ Սեւերոսի
մօտ. իրենց փափաքն էր ամփոփել հաւա-
քածոյին մէջ կարելի եղածին չափ բաղ-
մաթիւ վկայութիւններ:

Ձանց կ'ընեմ յիշել շղթաներու մասին
գիտնականներէ մինչեւ այսօր կատարուած
ուսումնասիրութեան արդիւնքը՝ ձեռա-
դիրներու դասաստորութեան, հրատարա-
կութեան եւ թարգմանութեան: Ս. Գրքի
խմբագիր մեկնութիւններու ցանկը գիւրին
է գտնել Համայնագիրտակներու եւ Սուրբ
Գրքի բառարաններու մէջ(4):

Հ. ՔԵՐՈՐԷՅ Ա. ՉՐԱՔԵԱՆ

(Շարունակելի)

ԴՐԱԽՏԱԳԻՐՔ

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՒ

(Շար. տես «Բագմավեպ», 1956, Բ. 1-2, էջ 3)

ԴՐԱԽՏԱԳԻՐՔԻ ՏԱՂԱՉԱՓՈՒԹԻՒՆԸ

Առաքել Սիւնեցիի գործածած չափն է,
Դրախտագիրքի մէջ, 4-4-5: Երրորդ ան-
գամը, հնգավանկ, մեր հրատարակու-
թեան մէջ՝ առանձին տողով կը ներկայա-
ցնենք, քիչ մը ներսօք տկտկով: Հետե-
ւաբար, իրականին մէջ, ամէն մէկ տուն
կազմուած է ւերկու տողերէ, որոնք մեր
չարուածքին մէջ՝ չորսի վերածուցան:

Սակայն չափը այնքան խիստ կերպով
պահուած չէ տեւողաբար. ենթակայ է բա-
ցառութիւններու: Այսպէս, կը պատահի
որ առաջին եւ երկրորդ անդամները ըլլան
հնգավանկ, թէեւ ոչ այնքան յաճախակի:
Գլխաւորաբար երրորդ անդամն է որ ըս-
տէպ, փոխանակ հինգի, կ'ուենայ վեց եւ
երեքման մինչեւ եօթը վանկ:

Օրինակները կը թուենք մեր նախորդ
յօդուածին մէջ հրատարակած Առաջին
ձառն, տալով նաեւ համապատասխան
տողերու թիւերը.

գ. անդամ, վեցավանկ

- ու զհամ քաղցրութեան մեղ (25)
- խոտ կու արածես քեզ (35)
- ու ան օրինակ քեզ (39)
- որ դու վայելես քեզ (55)
- ու մարմինդ գիշեր քեզ (67)
- որ ցաւ կու ծնանի քեզ (113)
- ու անդ ժողովէ զմեզ (146)

գ. անդամ, եօթնավանկ

- ու Աստուած հաճի ի քեզ (43)
- ու բարի տայ կարծեւ քեզ (119)

Ինչպէս կը տեսնէք, վերոյիշեալ պա-
րագաներուն, միշտ ու մը կամ որ մը կայ
նախադասութեան մէջ, երբեմն ալ ի: Ձե-
ռագրին մէջ, եւ գլխաւորապէս Ա օրինա-
կին մէջ, այդ ու, քէ, որ կամ ի բառերուն
վրայ կ'ընդ սուղ մը (օ) նշանակուած է:
Այդ նշանը, չարակոչներու մէջ շատ յա-
ճախակի կը գործածուի, եւ վանկն արա-
դացնելու կը ծառայէ: Հաւանօրէն մեր
ձեռագրին մէջ ալ այդ նշանակութեամբ
գործածուած է:

Ուրեմն այդ ու-ն յաճախ պիտի կար-
դանք 'ւ (պարզապէս՝ վ), կցելով յաջորդ
բառին, որ ընդհանրապէս ձայնաւորով կը
սկսի: Օրինակ.

- 'ւ ան օրինակ քեզ (39)
- 'ւ անդ ժողովէ զմեզ (146)

Բայց յաճախ այս յապաւումը տեղի
պիտի ունենայ նաեւ երբ յաջորդող բառը
բաղաձայնով սկսի: Օրինակ.

- 'ւ զհամ քաղցրութեան մեղ (25)
- 'ւ մարմինդ գիշեր քեզ (67)
- 'ւ Աստուած հաճի (ի) քեզ (43)

Այս վերջին օրինակին մէջ, ներքին ի
նախդիրն ալ յապաւելու է ու կցելու նա-
խորդ վանկին:

Նախորդ անգամ մեր հրատարակած
յօդուածին մէջ՝ անփոփոխ թողած էինք
բնագիրը, վերոյիշեալ պարագաներուն,
վստահելով ընթերցողին ուշադրութեան:
Այսուհետեւ կ'ընդգծենք այդ յապաւելի
բառերը, մատնանշելու համար՝ որ ատոնք
սուղ կամ կարճ վանկեր են (մաղաբոյժ

վանկեր), ձեռագրին մէջ իսկ յաճախ
այդպէս նշանակուած:

Ձենք ուղեր մեր կողմէ գիրքեր յապաւել,
աւելի առարկայական կերպով ներկայա-
ցնելու համար բնագիրը:

Տակաւին կը մնան բացառութիւններ,
որոնք անշուշտ յարգելի են եւ անձեռն-
մխելի: Օրինակ.

ա. անդամ, հնգավանկ

- անկեաց քեզ Աստուած (44)
- գիշեր գէշ իրաց (72)

բ. անդամ, հնգավանկ

- է անգիտութեամբ (80)
- ի կենաց բանէն (88)

Ասոնք կը թողունք ինչպէս որ են, բա-
ւականանալով այս անդրադարձութեամբ:

Նկատելի է նաեւ ոտանաւորին մէջ
վանկ կազմող ը-ի անտեղի գործածութիւ-
նը՝ ձեռագրին մէջ: Յաճախ բոլորովին
անտեսուած է. մերթ կը գրուի՝ ուր աւե-
լորդ է: Մեր հրատարակութեան մէջ դանց
կ'ընենք արտադրել այդ ը-երը, եւ կը դո-
հանանք ձեռագրի տարբերակները տալով:

Յ ա ջ ո ռ դ ա բ ար, հրատարակութեան
յանձնելով բնագիրն չարունակութիւնը,
պիտի խօսինք Դրախտագիրքի լեզուն,
պարունակութեան եւ գրական արժէքի
մասին:

(Շարունակելի)